

ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՊԱՅՔԱՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՆԵՐԽՈՒԺՄԱՆ ԴԵՄ ԵՎ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՕՍՄԱՆՅԱՆ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ
ՈՒԺԵՐԻ ՀԵՏ

Պատմ. զին. դոկտոր Հ. Դ. ՓԱՓԱԳՅԱՆ

Դավիթ-բեկի գլխավորությամբ 1722—1728 թթ. Սյունիքում մղված աղա-
տադրական կռիվների պատմության հիմնական սկզբնաղբյուրը Վենետիկի
Մխիթարյան հայրերից, սերաստացի Ղուկաս Ստեփանոսյանի գրի առած պատ-
մութիւնն է, որը նախապես գիտական շրջանակներին ծանոթ էր «Ընտիր պատ-
մութիւն Դավիթ-բեկին և պատերազմաց հայոցն հափանուս վերնագրով, Ա. Գու-
լամիրյանի հրատարակությամբ¹, իսկ վերջերս Սամվել վարդապետ Արամյանի
աշխատասիրությամբ լույս տեսան այդ կարևոր աղբյուրի ճշգրտված նախնա-
կան և համապատում բնագրերը՝ «Պատմութիւն Ղափանցւոց» վերնագրով²։
Եթե առաջին հրատարակությունը գիտական շրջանառության մեջ մտավ որ-
պես իրեն շարժման նախաձեռնող ներկայացնող Ստեփանոս Շահումյանի,
մասամբ նաև իր զինակիցներից ոմանց պատմածի հիման վրա Ղուկաս Ստե-
փանոսյանի կողմից շարադրված պատմություն, ապա այս նոր, լիակատար
հրատարակությունը եկավ վերջնականապես հաստատելու, որ պատմությանը
հիմք են հանդիսացել շարժման կարևոր մասնակիցներից՝ նույն Ստեփանոս
Շահումյանի և հավասարապես նաև Տեր-Ավետիսի բանավոր նկարագրությու-
նները։ Ս. Արամյանի հրատարակած Ա բնագիրը այդ երկու անձնավորություն-
ների պատմածի գրեթե անմիջական գրառումն է³, իսկ Բ բնագիրը այդ զույգ
գրառումների հիման վրա խմբագրված «համապատումը»՝ ամփոփված առան-
ձին վերնագրեր կրող երեք գլուխներում⁴։ Այս պարագաներում, հասկանալի է,
որ նշված բնագրերում շարժման հանգամանքների և նկարագրված դեպքերի ու
դեմքերի վերաբերյալ որևէ այլ աղբյուրի ամեն մի տեղեկություն կարող է
ամրացնել մեր վստահությունը այս եզակի պատմական երկասիրության նկատ-
մամբ և բարձրացնել նրա արժեքը, որպես ճշմարտապատում և հավաստի
սկզբնաղբյուր։

Այս առումով ուշագրավ տեղեկություն է պարունակում Մեսրոպ եպիսկո-
պոս Տեր-Մովսիսյանի 1922 թ. հրատարակած, 1746 թ. մի հիշատակարանը,
որտեղ, որպես Դավիթ-բեկի աներորդին հանդես եկող Ղուկասենց Փարսաղան-
բեկի որդի Թադին, ընկերակցով իր գերդաստանի անդամներին, եղբայրներից
մեկի մասին գրում է. «Մեր միւս եղբայր Աքտլմասեհն որ վրաստան պարոնի
հրամանաւն գնացին տեղն զօրածոդով առնելոյ, որ եղբայրս էլ զօրպ էր, որոց
գլխաւորն էր Ալիխանի որդի Դաւութ-պէկն, որ է իմ փեսայ, որք ընդ պարսից
և օսմանցոց բազում պատերազմս ետուն, և ի վախճանի անկան ի մարտին»⁵։
Դավիթ-բեկին վերաբերող բանավոր զրույցներից ու ավանդություններից բա-

¹ Դավիթ բեկ. Ընտիր պատմութիւն Դավիթ բեկին և պատերազմաց հայոցն հափանու...
Վաղարշապատ, 1871։

² Դավիթ բեկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», աշխ. հ. Սամվել վրդ. Արամյան. Վենետիկ,
1978 (այսուհետև՝ Պատմութիւն Ղափանցւոց)։

³ Նույն տեղում, էջ 119—145։

⁴ Նույն տեղում, էջ 147—181։

⁵ Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, գիրք Ա և Բ, Վաղարշապատ, 1921—1922,
էջ 136—137, հմտ.։

ցի, սա փաստորեն առաջին գրավոր տեղեկությունն է, որ գալիս է հաստատելու շարժման սկզբնավորման և ընթացքի մասին «Պատմության» մեջ ավելի ընդարձակ շարադրվածը։ Այն տարբերությամբ միայն, որ «Պատմության» հեղինակը, հիմք ունենալով շարժմանը մինչև վերջ մասնակցած Տեր-Ավետիսի վկայությունը, գրում է. «Եւ եղև ի ժամանակի յայսմիկ հիվանդանալ Դաւթի և մեռանել իսկ խաղաղութեամբ ի տան իւրում ի Հալիձոր», իսկ հիշատակարանում, ինչպես տեսանք, ասված է, որ Թաղիի եղբայր Աբտմասնհը Դավիթ-բեկի հետ միասին մարտնչելով պարսիկների և օսմանցիների դեմ «ի վախճանի անկան ի մարտին»։

Այս հակասությունը առիթ է տվել ուսումնասիրողներից ոմանց կասկածի տակ առնելու «Պատմության» վերոբերյալ տողերը և առաջ քաշելու այն տեսակետը, թե հավանաբար Դավիթ-բեկը սպանվել է 1726 թ.՝ Վկայակոչելով Ն. Ադոնցին և Պ. Հարությունյանին, որոնք ելնելով մինչև Ս. Արամյանի հրատարակությունը գոյություն ունեցող այն սխալ կարծիքից, որ ամբողջ «Պատմությունը» թելադրված է Ստ. Շահումյանցի կողմից⁶, որը 1725 թ. խոտանանի կռիվների ժամանակ գերի ընկնելուց հետո հեռացել էր ասպարեզից ու գնացել Վենետիկ, Աշ. Հովհաննիսյանը գտնում է, որ նա «անկարող էր ստույգ պատկերացում ունենալ Դավիթ-բեկի ապստամբության հետագա ընթացքի մասին»⁷։ Առաջ է քաշվում նաև Կրուշինսկու վկայությունը այն մասին, որ 1726 թ. Դավիթ-բեկի զինակիցներից Մխիթար-բեկը, որին նա միլիթ Մխիթար է անվանում, իշխան է օժվել և թուրք նվաճողներին մի քանի անգամ աղետալի պարտության է մատնել։ Նվ քանի որ 1726 թ. մարտի 24-ին, Ղափանի հայերի անունից Ռուսաց կայսրին հղված աղերսագիրը ստորագրված է ոչ թե Դավիթ-բեկի, այլ Մխիթար-բեկի կողմից, ապա, ինչպես Պ. Հարությունյանը, այնպես նաև Աշ. Հովհաննիսյանը գտնում են, որ «Պատմության» տվյալները Դավիթ-բեկի մահվան հանգամանքների մասին ճշգրիտ չեն և 1726 թ. հետո տեղի ունեցած իրադարձություններին նրա մասնակցությունը մտացածին է և հակասում է իրողության։

Սակայն, ինչպես արդեն ասվեց, Ս. Արամյանի՝ հրատարակությանը առընթեր կատարված ուսումնասիրությունը վերջնականապես հաստատում է, որ «Պատմության» այդ հատվածը գրված է կռիվներին մինչև վերջը մասնակցած Տեր-Ավետիսի պատմածի հիման վրա⁸։ Ուստի, ավելի ստուգապատում կարող է լինել, քան դեպքերից շուրջ երկու տասնամյակ անց, հեռավոր Աստրախանում, թեկուզ և ազգակից, սակայն իրադարձություններին մոտիկից անհաղորդ, Ղուզանենց Թաղիի՝ բերնբերան անցնելով տեղ հասած և պատահականորեն հիշատակարանում գրի առնված տեղեկությունները։ Աշ. Հովհաննիսյանը գրտնում է, որ Ղուզանենց Թաղիին «չհավատալու հիմք չունենք»։ Այսպես կարելի էր մտածել այն դեպքում, եթե գոյություն չունենար շարժման ամբողջ ընթացքում մարտերի անմիջական մասնակից, Դավիթ-բեկի մերձավորագույն զինակից Տեր-Ավետիսի՝ մեր կարծիքով, առավել արժանահավատ վկայությունը։

Ինչ վերաբերում է Կրուշինսկու՝ նույնպես միջնորդաբար հաղորդած տեղեկություններին Մխիթար-բեկի օժման վերաբերյալ, ապա պետք է ասել, որ դաբոլորովին էլ հիմք չի տալիս պնդելու, թե օժումը տեղի է ունեցել անպայման Դավիթ-բեկի մահից հետո և որպես նրան փոխարինողի։

Ինչպես աղերսագրից, այնպես էլ «Պատմությունից» պարզ երևում է, որ 1726 թ. օսմանյան զորաբանակները կարողացել էին Օրդուբադի և Ադուլիսի ուղղությամբ թափանցել Ղափան և պառակտում առաջացնելով հայոց մեջ։

6 Պ. Հարությունյանը Ս. Շահումյանին համարում է «Դավիթ բեկի պատմության» հեղինակ-տե՛ս Ս. Պ. Բրուսիլով. Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века. М., 1954, с. 252, 258, 260—272 и пр.

7 Աշ. Հովհաննիսյան. Դավիթ բեկի ղիլավորած Ղափանի ապստամբությունը. — «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, № 1, էջ 106։

8 Տե՛ս Պատմություն Ղափանցոց, էջ 77—85։

մուտք գործել երկրի ներքին գավառները: Ուժերի այս ջլատման պայմաններում, երբ չկար միասնական ղեկավարություն, դժվար է որոշակի խոսք ասել 1726 թ. մարտի 24 թվակիր աղերսագրի շարադրման հանգամանքների մասին: Մի բան պարզ է, որ, ինչպես դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, Կասպից ծովեզերքում գտնվող ռուսական զորքերի հրամանատարությունը իրավասու չէր ռազմական օգնություն ցույց տալու ո՛չ Ղափանում և ո՛չ էլ Ղարաբաղի սղնախներում օսմանյան զորքերի դեմ մենմենակ մարտնչող հայ զինվորությունը, քանի որ 1724 թ. օսմանցիների հետ կնքված պայմանագրով համաձայնություն էր կայացել, որ Ատրպատականն ու ամբողջ Անդրկովկասը, բացի ծովափնյա շրջաններից, պետք է ռազմակալման ենթարկվեին օսմանյան զորքերի կողմից:

Առանձին հոդվածում անդրադառնալով այս ուղերձ-աղերսագրին, Ա. Միրզոյանը, համադրելով այն «Պատմության» տվյալների հետ և ելնելով Դավիթ-բեկի ու Մխիթարի փոխհարաբերություններում մերթնդմերթ առաջացած և հաճախ սուր բնույթ ստացած տարաձայնությունների փաստից, հավանական է գտնում, որ այդ ծանր օրերին ևս հակասություններ են եղել նրանց միջև, որպիսի պայմաններում Մխիթարը, սեփական նախաձեռնությամբ, համախոհ մի քանի այլ յուզբաշինների ընկերակցությամբ, փորձել է կապ հաստատել ռուսական բանակի հրամանատարության հետ և օգնություն ստանալ նրանցից⁹:

Ժամանակին առիթ է եղել նշելու, որ ստեղծված պայմաններում դիմադրական ուժերի կազմավորմանը նպաստել են դասակարգային ներհակություններն ու դրսից ակնկալվող օգնության և օսմանցիների դեմ անհավասար պայքարում դաշնակիցներ որոնելու վերաբերյալ թեր և դեմ կարծիքները¹⁰: Երբ քննության ենք առնում 1726 թ. Ղափանում ստեղծված իրավիճակը, դժվար չէ նկատել, որ օրհասական այդ օրերին, սկզբից ևեթ Ռուսաստանի օգնությանը ապավինած և ներկա դեպքում դիմադրությունը շարունակելու կողմնակից հայ զինվորականությունը պիտի փորձեր օգնություն ստանալ այդ կողմից, որը կգար նաև ի կատար ածելու մահմեդական բռնատիրության լծից հայ ժողովրդի ազատագրության դարավոր երազանքը: Սակայն, ինչպես վերը նշվեց, 1724 թ. կնքված ռուս-թուրքական պայմանագիրը բացառում էր Կասպից ծովի առափնյա շրջանները նվաճած ռուսական զորքերի որևէ շարժում դեպի Անդրկովկասի ներքին նահանգները:

Այս պարագաներում, ինչ խոսք, կարող էին և տարաձայնություններ առաջանալ շարժման ղեկավարների միջև: Առավել իրատես անձինք, ինչպիսին էր պետական ու զինվորական գործունեության անցյալ ունեցող Դավիթ-բեկը, հստակորեն վերլուծելով քաղաքական իրադրությունը, չէին կարող հույսեր կապել այդօրինակ օգնության հետ: Իսկ լավատեսորեն տրամադրվածները, առանց հաշվի առնելու վերոհիշյալ անբարենպաստ քաղաքական զարգացումները, ավանդական մղումներով կարող էին պնդել՝ մեկ անգամ ևս նման մի աղերսագրով դիմելու հղոր Ռուսաց տերությանը, որպես քրիստոնյաների ազատարարի, խնդրելով «վասն Քրիստոսի սէրն» օգնության հասնել գոյամարտի ելած հայությանը¹¹:

Երբ ելնում ենք այն իրողությունից, որ քննարկվող պատմական ժամանակահատվածում ազատագրական պայքարի դրոշ պարզած լեռնաշխարհի հայության գլխավոր թշնամին իրանական բռնակալական լծի տակ տառապած Անդրկովկասի ժողովուրդներին հրի և սրի ուժով իրեն ենթարկելու և ստրկացնելու նպատակով արշավանքի ելած օսմանյան զորքերն էին, ինքնին պարզ է

9 Ա. Միրզոյան. Մխիթար-բեկի կողմից ռուսական կառավարության ուղղված ուղերձի հարցի շուրջը.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 8, էջ 90—94:

10 Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 171:

11 П. Арутюнян. Послание Мхитар-бека русскому правительству.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1952, № 3, էջ 98—99:

դառնում, որ դրանց դեմ մղվող հերոսական պայքարով հայ զինվորությունը ակամա հանդես էր գալիս որպես օսմանցիների դեմ մարտնչող իրանական զինված ուժերի դաշնակից։ Իսկ այդ ուժերին Իրանի արևմտյան շրջաններում և հատկապես Ատրպատականում գլխավորում էր Սեֆևիդների գահի օրինական ժառանգորդ շահ Թահմասպ II-ը։

Պատմողական սկզբնաղբյուրների տվյալներն ու դիվանական նյութերը հաստատում են, որ 1722 թ. իրեն շահ հայտարարած Թահմասպ II-ը, 1723 թ. գտնվում էր Ատրպատականում, որտեղ նա փորձում էր միավորել ղզլբաշներին հավատարիմ բեկլարբեկիների, խանների ու ռազմիկ ցեղախմբերի ամիրների զինված ուժերը՝ Սյունյաց և Արցախի հայության ապստամբությունը ճնշելու և օսմանցիների ներխուժմանը դիմագրավելու համար։

Նադիր շահի պալատական պատմիչ Մուհամադ-Քազիմը, պատմելով աֆղանների կողմից Սպահանի գրավումից և Սեֆյան վերջին շահ Սուլթան-Հուսեյնի գահազրկումից հետո նրա ավագ որդու՝ Թահմասպի, վտարանդիության մեջ իրեն շահ հռչակելու մասին, հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում՝ նաև երկրում ծայր առած անիշխանության և ծայրամասերում, այդ թվում հատկապես Հայաստանում սկսված և արագորեն ծավալվող ապստամբությունների մասին։ Թահմասպի վարչաքաղաքական ու ռազմական գործունեության վերաբերյալ։ Նա գրում է, որ գահակալությունից անմիջապես հետո շահին են ներկայացել Գանձակի և Ղարաբաղի կողմերից եկած պատգամավորներ, որոնք տաճնապով պատմել են հայերի ապստամբության մասին, ավելացնելով, որ այն ծավալվելով սպառնազին բնույթ է ստացել և եթե շտապ միջոցներ ձեռք չառնեն, շուտով Գանձակի և Նրևանի բերդերը ևս նրանց ձեռքը կանցնեն¹²։

Նոր միայն Բարձրագույն դիվանի վեբիլ նշանակված Մուրթուզա-կուլի խանը կարգադրում է ամիր Ռուստամ Կարակոյունլուին, քսան հազարանոց բանակով գնալ ճնշելու հայերի ապստամբությունը։ Միաժամանակ հրահանգ է ուղարկվում Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Նալմաստի, Դումբուլիի, Բարգուշատի և այլ շրջանների խաներին ու ամիրներին, որ անմիջապես իրենց զորքերով գան և հիջր. 1135 (1723) թ. լինեն Թավրիզում։ Մինչ նրանք կներկայանային, պալատականներից Մուհամադ-Ալի խանի սադրանքով, շահը հրամայում է գլխատել Մուրթուզա-կուլի խանին, որը և պատճառ է դառնում խաների պառակտման և զորքերի դասալքման¹³։

Շահ Թահմասպ II-ի նույն թվականների հրովարտականները՝ ուղղված Արդաբիլի Մուրթուզա-կուլի բեկ Սաֆավիին, նույնպես վերաբերում են այդ կողմերի, ինչպես նաև Կըզըլ-աղաջի, Ուշրուդի, Քասգարի, Աստարայի, Լենքորանի և այլ վայրերի բոլոր զինված ուժերի (չերիք և իլչարի) շտապ զորահավաքին և արթունի զորակայանը ներկայանալուն¹⁴։

Այս տեսակետից ուշագրավ է հատկապես շահ Թահմասպ II-ի հիջր. 1136 թ. զիհաջա ամսին (1724 թ. օգ. 21-սեպ. 19) Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանի դիմումի հիման վրա հրապարակված հրովարտակը¹⁵, որը կարևոր տեղեկություններ պարունակելով Դավիթ-բեկի գլխավոր հակառակորդի վերաբերյալ, գալիս է նաև հավաստելու «Պատմության» մեջ նկարագրված դեպքերի ճշգրտությունը։ Այս հրովարտակը ցարդ անժանոթ է եղել զիտական

¹² محمد كاظم، نامه عالم آرای نادری، مسكو، ۱۹۶۱، جلد اول، ص ۹۹ (այսուհետև՝ Մուհամադ-Քազիմ)։

¹³ Մուհամադ-Քազիմ, հ. I, էջ 100—101։

¹⁴ Bert Fragner. Ardabil zwischen Sultan und Schah. Zehn Urkunden Schah Tahmasps., Turcica, Revue d'études turques, t. VI, 1975, Paris—Strassburg, doc. I, 2 3, 4.

¹⁵ ՎՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆոնդ 1452, վավ. 116։ Հրովարտակը հրապարակման իրավունքով մեզ է տրամադրել իրանագետ Մ. Ա. Տոգուան, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

շրջանակներին, ուստի ստորև մեջ ենք բերում դրա հայերեն թարգմանությունը՝ ամբողջությամբ և վավերագրի նմանահանությունն ու պարսկերեն բնագիրը.

«Աշխարհը հպատակեցնող սուլյն հրամանագիրը հրապարակվեց այն մասին, որ Բարգուշատի և Լափանի համիմ, էմիրության և իշխանության ապաստան և տնօրեն, հաղթական բանակի շարխչիբաշի¹⁶ Ֆաթհ-Ալի սուլթանը արժանապատիվ և փառավորվելով թող իմանա, որ իր զեկուցագրի մասին, որ նա ներկայացրել էր բարձրաստիճան սարդար, Ազերբայջանի բեկլարբեկին այլ խնդիրների շարքին, խնդրելով նաև իրեն հայկական տիրույթս շնորհել և խալաջ Ամիր-անբարիի համայնփից և Բարգուշատի հայերից գանձվող հարկերն (մութավաջեհաթ) ու Լափսեւաթում գտնվող Զանգիան, Դարբալա, Փիրի-դարբազ և Մուխսուրի կոչվող գյուղերը, ինչպես նաև խալիսենները, եկամուտների պակասուրդի դիմաց, տրվեն իրեն,—բարձրաստիճան բեկլարբեկին կողմից, բարձրագույն սեմում զեկուցվեց:

Նորին էմիրության և իշխանության ապավենի նկատմամբ եղած արժանապատիվ անսպառ գթությամբ, վերոհիշյալ խալաջներից (ցեղեր) և հայերից գանձվող հարկերը (մութավաջեհաթ) և հիշյալ շուրս գյուղերը, եկամուտների պակասը լրացնելու համար շնորհեցինք նրան: Ինչպես նաև խալիսե վայրերը, որոնք նախապես տրված էին բյուրաթի (արժույթի արհեստանոցներ) բարձրաստիճան նազիրին, նրան հանձնեցինք որպեսզի հիշյալ խալիսե վայրերի հարկերը (վշուհաթ) գանձելով ուղարկի պետական գանձարան: Ուրից հետո նա պետք է իր մոտ հավաքի այդ կողմերի բոլոր զինված ուժերն ու կովի ելած ամբոխը (իջարի) և անմիջապես գնա Օրդուբադ գյուղաֆաղաֆը և Նախշևանի ու Մարանդի բարձրաստիճան հափիմների հետ միասին, որոնց նույնպես կարգադրված է գալ նշված գյուղաֆաղաֆ, գան Զուխուր-Սադի բարձրաստիճան բեկլարբեկի Մանսուր-խանի մոտ և վերջինիս հետ խորհրդակցելով, միացյալ ուժերով հայերին, անարգ օսմանցիներին և ֆրդերին վանեն ու ոչնչացնեն և հիշյալ գյուղաֆաղաֆը նրանց ձեռքից ետ վերցնեն:

Անհրաժեշտ է նաև, որ նա հավաքի, սիրաշահի և հուսադրի Զիվանջիր և Քաբիրլու ցեղերին և սրտապնդելով, անհրաժեշտ հոգատարությունը դրսևորի նրանց նկատմամբ, և թող իրեն այս պարտականություններից ազատ չհամարի: Քանզի մեր արժանապատիվ մեծությունը հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջում, և թող իմանա, որ հայերին սաստելու գործում նրան սպասություն է տրված. իրերի լավ կամ վատ ընթացքի համար մենք նրան եմք պատասխանատու հանաչում: Անհրաժեշտ է, որպեսզի բոլորը միատեղ, նվիրյալ ծառայություն մատուցեն և այս գործում չթերանան:

Թող ձերդ էմիրության և իշխանության ապավենը բոլոր հարցերում իր ծառայություններն ու նվիրվածությունը դրսևորի, որպեսզի, աստծով, նրան իսկության և էյալեթության տիրույթներ շնորհենք և այլ պարգևներով ու բարձրացումներով փառավորենք, և թող արժանապատիվ հոգատարությամբ միսիթարված լինի:

Գրվեց 1136 թ. սրբազան զիհաջա ամսին (1724 թ. օգ. 21-սեպ. 19)»:

Հրովարտակի վերի մասում շահ Թահմասպի հիշք. 1135 թ. կնիքն է, ինչ որ հաստատում է վավերագրի բնագիր լինելը: Իսկ թե ինչ ճանապարհով անձամբ Ֆաթհ-Ալի սուլթանին հղված Հրովարտակի բնագիրը ի վերջո հասել է Թիֆլիս և հանգրվանել պետական արխիվում, այդ մասին մեզ ոչինչ հայտնի չէ: Թեև հարցն ինքնին հետաքրքիր է և կարոտ առանձին ուսումնասիրության: Թերևս այն կարող են պարզել միայն Վրաստանի արխիվային ֆոնդերի պատմությունը զբաղվող մասնագետները:

Պետք է ենթադրել, սակայն, որ Ֆաթհ-Ալի սուլթանի մոտ գտնվող այս կարևոր փաստաթուղթը, որն է ձևով նրա հակառակորդների ձեռքն անցնելուց:

¹⁶ Առաջապահ զորագնդի հրամանատար:

(مهر ماه طهماسب ثانی ۱۱۳۵ هـ)

حکم جهانمضاع عند آنکه امارت و حکومت بناء نظاماً الاماره و
الحکومه فتحش سلطان چرخي باشي ميا بهرت بناء و حاکم برکفط
و قبان سفتت تاها نه سرافراز گشته بداند که شرحی که در بساره
استدعاء لقب اربالتنجیه خود و مقرر عدن متوجهات خلق امیر عبیری
و ارامنه برکفط و چهار فریه مذکوره ذیل قبان
فریه زگیان ، فریه داربالا ، فریه پیری داربالا ، فریه محضاری
در محس کسر مدخل در وجه آید و داده عدن عالجات نیز بان امارت
بناء و سایر مرآتیب عالیه در دار و بیگلربیگی آنرا بجان نموده
بود عالیه مشارالیه حقیقت آنرا معروض شده و الا داشته بود و
بنابر وفور مراحم عدیوانه دربار آن امارت و حکومت بناء متوجهات
اخلج و ارامنه مذکور و چهار محل مذکور را که اعتدال نموده بود
در محس کسر مدخل بان امارت بناء مرجه و محال خالصه را که بضبط
عالیه ناظر بیونات در دار خاصه شریقه مقرر بود ضبط او مقرر
فرمودیم که وجوهات محال خاصه مزبوره را ضبط و انفاد خزانه عامه
و چریک و ایلحاری محال مذکور را نزد خود جمع نموده و بزودی زود
بقصه اردوباد آمده بانفاد عالیه حاکم نخجوان و حاکم مرند که
مقرر فرموده ایم که ایشان نیز بقصه مزبوره نزد عالیه منصرف
خان بیگلربیگی بخور سعد آیند بصلاح و اتفاق عالیه منصور خان
مشارالیه بدفع و رفع ارامنه و مغاذیل رومی و اکراد و استرداد
نصیه مزبوره از تصرف ایشان بردارد و ایالت جوانشیر و کبیرلو را
نهر مستمال و امیدوار و نزد خود جمع نموده آنچه لازمه جانتقانی
و اهتمام است در هرباب بصله آورد و خود را معاف نداند که نواب
همایون ما تنبیه و دفع ارامنه و مخالفین دیگر را از او میخواهیم
و او را در باب تنبیه ارامنه مرهی فرموده ایم و بیشک بد را از او
می بیهیم می باید همگی با اتفاق یکدیگر آنجا که جانتقانی است
بتقدیم رسانند و کوتاهی نورزند و آن امارت و حکومت بناء حسن
خدمت و جانتقانی خود را در هرباب بمتعه ظهور رساند که انشاء الله
از او ببلق خانی و ایالت و سایر نوازجات و تریجات سرافراز می
فرمائیم و بتوجهات بانها نه مستمال باشد .

تحریراً فی شهر ربیع الحرام سنه ۱۱۳۶

հետո միայն կարող էր հայտնվել Վրաստանում: Իսկ դա կարող էր տեղի ունենալ նաև 1724—1725 թթ. Դավիթ-բեկի հետ ունեցած այն ընդհարումների ժամանակ, որոնց ընթացքում եղան դեպքեր, երբ սուլթանը, չախջախիչ պարտություն կրելով, հազիվ կարողացավ ամեն ինչ թողած ճողոպրել: Անհավանական չէ նաև, որ հրովարտակը տանողները ճամփին գերված լինեն Դավիթ-բեկի մարդկանց կողմից, որոնք վերցնելով նրանցից հրովարտակը, ուղարկած լինեն Վախթանգին ի գիտություն:

Այս բոլորն անշուշտ սոսկ ենթադրություններ են, քանի որ մինչև սույն հրովարտակի հայտնաբերումը, Ֆաթհ-Ալի սուլթանի մասին մեր տեղեկությունները հիմնականում սահմանափակվում էին «Պատմության» և Ծսայի Հասան-Ջալալյանի տվյալներով, որոնց հիման վրա Ս. Արամյանը իր ուսումնասիրության մեջ խոսելով 1722 թ. լեզգիների արշավանքի մասին գրում է. «Պարսիկ ջարխաշի խանը, գլուխ անցած մեծ բանակի մը՝ լեզգիներու դեմ կելլեր. բանակ դնելով Պարկուշատ գավառի մեջեն անցնող Արաքս գետի եզերքը»¹⁷: Պարզ է, որ խոսքը շարխի բաշի Ֆաթհ-Ալի սուլթանի մասին է, որը, ինչպես նույն տեղում կարդում ենք, խուսափում է լեզգիների հետ ընդհարվելուց և հեռանում¹⁸: Հրովարտակում նաև տրված «շարխիբաշի» տիտղոսը կասկած չի թողնում, որ լեզգիների դեմ ելնողն ու ապա փախչողը նույն ինքն է՝ «Պատմության» մեջ բազմիցս հիշվող Բարգուշատի Ֆաթհ-Ալի սուլթանն է եղել:

Մեջ բերված հրովարտակի բովանդակությունից պարզ երևում է, որ նախապես արդեն շարխիբաշու զինվորական պաշտոն զբաղեցնող Ֆաթհ-Ալի սուլթանը որոշակի հանձնարարություն է ստացած եղել՝ իր հրամանատարության տակ եղած զորքերին միացնելով նաև տեղի մահմեդականներից հավաքագրված աշխարհագրականների ջոկատներն (իլչարի) ու Զիվանշիր և Քարիրու ցեղերի զինված ուժերը, հարձակման անցնել ճնշելու Ղափանի հայոց ապստամբությունը: Շեշտված է հատկապես, որ «հայերի և մյուս հակառակորդների սաստումը նրանից է պահանջվում» և որ «հայերին սաստելու գործում նրան ազատություն է տրված»:

«Պատմությունից» մեզ արդեն հայտնի է, թե ինչ ընթացք ունեցան կողմերի միջև բորբոքված արյունահեղ կռիվները: Բացի խոտանանի կռիվից և հատկապես Բարգուշատում տեղի ունեցած մեկ ընդհարումից, որտեղ մելիք Ֆրանգյուլի դավաճանության հետևանքով Թորոս իշխանի հրամանատարությամբ կռվող հայոց զորքերը ծուղակի մեջ ընկնելով պարտություն կրեցին, մնացյալ բոլոր ընդհարումներում վերջնական հաղթանակը միշտ էլ հայոց կողմն է եղել:

Սակայն, եթե 1724 թ., ինչպես այդ երևում է նաև հրովարտակի բովանդակությունից, շահը հրահանգում էր միավորել ուժերը ոչնչացնելու «հայերին, անարգ օսմանցիներին ու քրդերին», ապա երկու տարի անց արդեն, երբ օսմանյան ռազմակալման հետևանքով կռվող կողմերի հարաբերություններում լուրջ տեղաշարժեր էին կատարվել, նա կարգադրում էր իր հավատարիմ խաներին՝ օգնության հասնել Դավիթ-բեկին, որը միայնակ կռիվ էր մղում Բեքիր և Արաբ-Ալի փաշաների, նրանց միացած նույն Ֆաթհ-Ալի սուլթանի և օսմանցիներին հնազանդություն հայտնած այլ ուժերի դեմ:

Վ. Ոսկանյանն ու Վ. Դիլոյանը, XVIII դարի 20-ական թթ. Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքականությանը վերաբերող այլ արժեքավոր վավերագրերի շարքին, 1964 թ. հրատարակեցին նաև Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում պահվող շահ Թահմասպ II-ի հիշր. 1139 թ. ջումադի I ամսին (1727 թ. հունվար) տրված մի հրովարտակի ռուսերեն թարգմանությունը, որով շահը կարգադրում է Մուհամադ-Ռիզա խան Արդալլուին շտապ օգնության հասնել Դավիթ-բեկին, որ «իրադրության փոփոխությունների հե-

¹⁷ Պատմութիւն Ղափանցոց. Առաջաբան, էջ 29, Հմտ. Ծսայի Հասան-Ջալալյան. Պատմութիւն Աղուանից. Շուշի, 1839, էջ 44:

¹⁸ Նույն տեղում:

տևանքով ծանր կացության մեջ է ընկել¹⁹։ Մուհամադ-Ռիզա խանը, որ ղորշի-րաշիի զինվորական աստիճան ունեւր, Գիլանի բեկլարբեկին էր և ուսական զորքերի կողմից Գիլանի գրավումից հետո շահ Թահմասպի կողմից նշանակվել էր զինված ուժերի ընդհանուր հրամանատար (սիփահասալար)²⁰։

Ցավոք, ձեռքի տակ չունենք այս հրովարտակի պարսկերեն բնագիրը, որով թերևս հնարավոր կլիներ պարզել հրապարակմանը նախորդող իրադարձություններին և քաղաքական նախադրյալներին վերաբերող որոշ մանրամասնություններ։ Այս պարագաներում առավել հավանական է թվում, որ 1726 թ. մարտի 24-ին Մխիթար-բեկի և մի քանի զինակից յուզբաշինների ստորագրությամբ ուսաց արքունիք հղված աղերսագիր-ուղերձից հուսալի պատասխան չստանալով, փորձ է արվել օգնություն ստանալ այդ ժամանակ Անդրկովկաս և Ասորպատական ներխուժած օսմանյան զորքերի դեմ իրանական զինված ուժերի դիմադրությունը գլխավորող շահ Թահմասպից, որին և շահն արձագանքել է գլխավոր հրամանատար, սիփահասալար Մուհամադ-Ռիզա խանին ուղղված սուլյն հրովարտակով։

Վերը շարադրվածները գալիս են հաստատելու, որ ուսաց արքունիքին հղված դիմումի Մխիթար-բեկի կողմից ստորագրված լինելը չի կարող դիտվել ո՛չ որպես Դավիթ-բեկի բացակայության և ո՛չ էլ նրա և Մխիթար-բեկի միջև եղած տարածայնությունների առկայության մասին վկայող փաստ։ Միանգամայն հավանական է, որ հաշվի առնելով ստեղծված առանձնահատուկ իրավիճակից, թելադրվող որոշակի նկատառումներ, նպատակահարմար է համարվել, որ խնդրո առարկա աղերսագիրն ուղարկվի շարժման ճանաչված ղեկավարներից մեկի՝ Մխիթար-բեկի ստորագրությամբ, և ավելի քան ութ ամիս պատերազմ և դրական պատասխան չստանալուց հետո միայն, հավանաբար, շեշտելով ընդհանուր թշնամու դեմ մղվող կռիվներում ուժերը միավորելու և դաշնակցության անհրաժեշտությունը, Դավիթ-բեկը դիմել է շահին, հուսալով որոշ օգնություն ստանալ ձրանից։ Իսկ շահը չէր կարող հաշվի չառնել, որ այն ժամանակ, երբ օսմանյան զորքերը թափանցել էին Նախջևան ու Ղափան։ դիվանագիտությամբ կամ զենքի ուժով իրենց ենթարկել տեղի խաներից շատերին, նրանց դեմ անգիջում կռվի ելածները հիմնականում Դավիթ-բեկի գլխավորությամբ մարտնչող հայկական զորախմբերն էին։

Սակայն, ինչպես գիտենք, այս հույսերն էլ, չնայած շահի կողմից սիփահասալարին տրված հրահանգի, ի դերե ելան։ 1727 թ. գարնանը Հալիձորի տակ մղված վճռական ճակատամարտում, Դավիթ-Բեկն իր հավատարիմ զինակիցների՝ Մխիթար-բեկի և Տեր-Ավետիսի հետ հայ մարտիկների փոքրաթիվ ուժերով կարողացավ ետ մղել թուրքական զորաբանակների և նրանց հետ դաշնակցած Ցաթհ-Ալի սուլթանի, Ղարադաղի խանի, Ղարաշուղուների և նրանց միացած տեղական ֆեոդալների բազմահազար զորքերի դրոհները և ապա հարձակման անցնելով ջախջախիչ պարտության մատնել նրանց։ Կրկակոխ հետապնդելով սարսափահար փախչող թշնամուն, որը կռվի դաշտում թողել էր մի քանի հազար սպանված, մարտական դրոշներ, ռազմամթերք ու հանդերձանք, հայ մարտիկների արագ բազմապատկվող ուժերը մեծ արագությամբ կարողացան Ղափանի երկիրը մաքրել օսմանյան զորքերից և առաջանալ դեպի Գողթն։

Այս հաղթանակից հետո էլ Նախջևանն ու Գողթնը նվաճած օսմանյան զորաբանակների դեմ կռիվը շարունակելու համար Դավիթ-բեկը կրկին փորձում էր մարտի մեջ ներգրավել նաև Արաքսի մյուս ափում առկա իրանական ընդդիմադիր ուժերը. «Արդ իբրև ետես Դաւիթ թէ Աստուած օգնական է իւր,— կարդում ենք «Պատմության» առաջին օրինակի Տեր-Ավետիսի պատմած երկ-

19 Վ. Կ. Ոսկանյան, Վ. Ա. Դիլոյան. Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում XVIII դարի 20-ական թթ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 2, էջ 267։

20 Մուհամադ-Քազիմ. հ. I, էջ 355։

րորդ մասում,—խնդրէր այնուհետև տալ պատերազմ ընդ օսմանցոց, և առաջաց առ խանն Տուզալի՝ Քեղում, զՄխիթար հազարապետն և զտէր Աւետիսն՝ վաթսուն և վեց արամբ, և ասէ. «Եկ միաբանեալ տացուք պատերազմ ընդ օսմանցոց»։ Եւ եկեալ գտին զխանն ի շէնն Քուրդաշեան, և պատմեցին նմա զբանն, բայց նա երկեալ առնել զայն։ Իսկ եղբայր նորա, խանն լն Քազում ջանայր հաւանեցուցանել։ Եւ մինչդեռ ընդ այս վիճէին, զօրքն օսմանցոց եկեալ լցին զգաշտն Կելեանք²¹։

Տեր-Ավետիսի պատմածը վերաշարադրելիս հայր Ղուկաս Ստեփանոսյանը որոշ շեղումներ ու աղավաղումներ է թույլ տվել, տեղանունը դարձրել է անձնանուն, մեկի անունը վերագրել է մյուսին, աղճատել է տեղանուններ, շփոթել բնակավայրերի տեղադրությունը և այլն։ Անկասկած, որոշ աղավաղումներ հետևանք են այն բանի, որ պատմողն ու գրի առնողը իրարից խիստ տարբեր Սեբաստիայի և Ղարաբաղի բարբառների ներկայացուցիչներ էին։ Սրանով հանդերձ՝ ձեռքի տակ եղած հայ և պարսկալեզու աղբյուրները հնարավորություն են տալիս վերացնելու աղավաղումներն ու ճշտելու բնագիրը։

Այսպես, մեջ բերված հատվածից պարզ երևում է, որ դաշնակցության առաջարկով Դավիթ-բեկը դիմել է Արաքսից հարավ, Դուզալի շրջանին տիրող Քյազում-խան Կարադաղլուին²², Պատվիրակներ Մխիթար-բեկն ու Տեր-Ավետիսը, 66 զինվորների ուղեկցությամբ, խանին հանդիպել են նույն շրջանում գտնվող Քյուրդաշտ գյուղում և հայտնել Դավիթ-բեկի պատգամը, որին խանը չի համաձայնվել, իսկ նրա եղբայրը աշխատել է համոզել Քյազում-խանին ընդունել այդ առաջարկը։ Այնինչ, լավ չհասկանալով իր առաջին գրառման ժամանակ շարադրվածը, Ղ. Ստեփանոսյանը «Դուզալի խանը» ընկալել է որպես անձնանուն (Դուզ-Ալի) և ճիշտ չընկալելով կիսաբարբառային ձևով արտահայտված «և եղբայր նորա խանն լն Քազում ջանայր հաւանեցուցանել» խոսքը, համապատում բնագրում խանի եղբորը անվանում է «Լեքազի»²³։ Մինչդեռ, պարզապես Ղարաբաղի բարբառում տարբեր իմաստներ արտահայտող «լն» կամ «լա» մակբայը այս դեպքում շեշտում է, որ խան ասելով ի նկատի ունի Քյազումին։

Եթե փորձենք անձնանուններն ու տեղանունները ճշտելով, արդի հայերենով շարադրել այս հատվածը, կստացվի այսպես.

«Արդ, երբ Դավիթը տեսավ, որ աստված օգնական է իրեն, այնուհետև ցանկացավ օսմանցոց դեմ պատերազմել, և Մխիթար հազարապետին ու տէր Ավետիսին 66 մարդով ուղարկեց Դուզալի խան Քազումի մոտ, որպեսզի ասեն նրան՝ «արի միաբանված պատերազմ մղենք օսմանցիների դեմ»։ Նրանք խանին գտան Քյուրդաշտ գյուղում և ասացին իրենց խոսքը, սակայն նա վախեցավ այդ անել, իսկ նրա եղբայրը աշխատում էր համոզել Քազում-խանին։ Եվ մինչդեռ նրանք վիճում էին այս հարցի շուրջ, օսմանյան դորքը եկավ լցվեց Կարճևանի դաշտը»։

Ըստ Տեր-Ավետիսի նախնական պատումի, միայն այն ժամանակ, երբ Մխիթար-բեկի հետ, իրենց 66 զինվորներով վերադառնում են Քյուրդաշտից և փախստական մեղրեցիներին հուսադրելով պատրաստվում են գիշերային հարձակումով դուրս քշել Մեղրի մտած օսմանցիներին, Քյազում-խանը հիսուն զինվորից բաղկացած մի ջոկատ է ուղարկում, որոնց Մխիթարը թողնում է Մեղրիի վերևի դարանում, հանձնարարելով առավոտյան մտնել քաղաք և մասնակցել ձեռնարկվելիք հարձակմանը։ Սակայն նրանք ուշանում են, և երբ օսմանցիք, զգալով սպառնացող վտանգը փորձում են հեռանալ քաղաքից, հայերը հարձակվելով փախուստի են մատնում նրանց և սպանում հարկահանին և ապա խանի դարանամուտ զինվորների մասնակցությամբ հետապնդում են փախչող-

21 Պատմութիւն Ղափանցոց, էջ 137—138։

22 Մուհամադ Քազիմ. հ. I, էջ 613։

23 Պատմութիւն Ղափանցոց, էջ 171։ Առհասարակ «Դուզ-Ալի» և «Լեքազի» մահմեդական անձնանուններ գոյություն չունեն։

ներին: Տեսնելով, որ սպասվող օժանդակ հայկական ուժերը ուշանում են, Մխիթարը առաջարկում է խանին միացյալ ուժերով գնալ և փակել դեպի Օրդուրադ տանող Ուղունբանդի կիրճը: Սակայն այստեղ խանը լքում է Մխիթարին ու հեռանում, չցանկանալով մասնակցել հետագա գործողություններին: Հայ զինվորները միայնակ կտրում են կիրճը, օսմանցիք հարկադրված փորձում են անցնել Արաքսի մյուս ափը, որի ընթացքում շատերը խեղդամահ են լինում, իսկ մնացյալները մահ են գտնում հայ զինվորների ձեռքով²⁴:

Ուշագրավ են Տեր-Ավետիսի տեղեկությունները Մեղրիում օսմանցիների տված զոհերի, նրանցից ձեռք բերված հարուստ ավարի և հատկապես հարկահանի (դեֆթերդար) բեռների մեջ հայտնաբերված ու ոչնչացված 32000 հարկային թղթերի մասին: Այլ առիթով նշել ենք, որ Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի արևելյան բաժնի արխիվում, Նախչևանի, Օրդուբադի, Ագուլիսի փաստաթղթերի կողքին բացակայում են Մեղրիին վերաբերող փաստաթղթերը, որը դալիս է հաստատելու Տեր-Ավետիսի պատմածների ճշմարտացիությունը²⁵: Սպանված հարկահանի բեռներում եղած 32000 հարկաթղթերը հայերից գանձվող չիզյայի թերթիկներն են (էվրագ-ի չիզյա), որ նախապես գրվում և բաժանվում էին չափահաս հայ տղամարդկանց և ապա ըստ կարողության՝ ստորին, միջին և վերին չափերով, տարվա ընթացքում գանձվում էր հատուկ պաշտոնյաների՝ չիզյադարների միջոցով: Դա նշանակում է, որ հարկային պաշտոնյաների նախնական հաշվումներով, այդ շրջանում գրված թերթիկների քանակությամբ չափահաս հայ տղամարդիկ կային:

Այս դեպքերին հաջորդում են օսմանյան զորքերի և հրամանատար փաշայի ջախջախումը Բեխ գյուղում, Բարգուշատից շարժվող զորքերի ոչնչացումը Օքյուզյարաթ լեռան մոտ և այլ օսմանյան ուժերի պարտությունը Մանլե գյուղի ուղղությամբ, որից հետո ամբողջ Ղափանի տարածքը մաքրվեց օսմանցիներից: Նկարագրելով այս բոլորը, Տեր-Ավետիսը այնուհետև պատմում է Դավիթ-բեկի կողմից՝ սպանված օսմանցիների զլուխները շահ Թահմասպին ուղարկելու և Թահմասպից դրվատական խոսք և արտոնությունների շնորհման վերաբերյալ հրահանգներ պարունակող հրովարտակ ստանալու մասին:

«Արդ իբրև ետես Դավիթ պէկն,—կարդում ենք Տեր-Ավետիսի թելադրած հատվածում,—յամենայն ուրեք զթշնամիսն իւր առաջի իւր վանեալս, առաքեաց շահ Թահմազին երկուս բեռինս գլխովք սպանեցելոց: Իսկ նա ևս առաքեաց սմա մի նժոյգ ձի, մի խալալամ և իւրաքանչիւր զօրապետացն մի մի վերարկու, և զիշխանութիւն հատանելոյ զգրամ: Գրեաց նաև զհրովարտակ և ասէ. Որքան խանք գոն ի կողմանսդ յայդոսիկ՝ գլխաւորն լիցի Դավիթ պէկն, և գնացեալ ի բաց հանցէ զօսմանցին յերկրէն իւրմէն»²⁶:

Սույն հատվածը համապատում բնագրում վերաշարադրելիս Ղ. Ստեփանոսյանը կրկնապատկել է ուղարկված զլուխների քանակը՝ դարձնելով չորս բեռ: Եւ ապա ավելացրել, որ ի տես այդ «ավարի», շահը «ուրախ լինէր յոյժ ի վերայ քաջութեանցն Դավթի և զօրավարաց նորա, զընծայս պարգևէր, հրովարտակս գրէր առ նա՝ ըստ բանիցս ըստ այսոցիկ»²⁷: Այնուհետև փորձ է արված Տեր-Ավետիսի բանավոր նկարագրության հիման վրա տալ հրովարտակի շարադրանքը, որն, ի դեպ, իր ձևով և ոճով բավական նման է այդ շրջանից մեղ հասած նմանատիպ հրովարտակներին:

«Շահ Թամազ արքայ Պարսից՝ առ քաջ Դավիթ պէկ, և առ քաջ զօրավարսդ Հայոց՝ որք ընդ քեզ են, ողջոյն:

24 Պատմութիւն Ղափանցոց, էջ 138:

25 Հ. Դ. Փ ա փ ա ո յ ա ն. Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան զինվանական վավերագրերը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 3, էջ 197:

26 Պատմութիւն Ղափանցոց, էջ 139:

27 Նույն տեղում, էջ 173:

Ի բազմաց բազում անգամ ազդեցող և մեծ զբաղմունքներ քոց, բայց արդ իբրև ակնադատ իսկ եղեալ մեր զձերոց մեծամեծ քաջութեանց՝ որ ընդդէմ թշնամեացն մերոց, ահա՛ արդ կացուցի զքեզ իշխան և գլուխ ամենայն իշխանաց մերոց, որք են ի կողմանսդ յայդոսիկ, և երկիրդ Ղափան՝ զոր կալար քաջութեամբ, քեզ լիցի։ Բայց դու ելցես և ժողովեսցես առ քեզ զամենայն զօրս և զխանս ի կողմանսդ յայդոսիկ և ի բաց հանցես զօսմանցին ի սահմանաց քոց»²⁸,

Հետևում է նախնական գրառման մեջ հիշված նվերների թվարկումը, նշելով դրամահատման իրավունքի մասին, ինչպես նաև այն մասին, որ «եկին հնազանդեցան նմա (Դավթին) իշխանք և գաւառապետքն Թուրքաց»²⁹։

Ինչպես ժամանակակիցների, այնպես էլ հետագա պատմագիրների կողմից շահ Թահմասպի 1722—1732 թթ. գահակալությունը իրավացիորեն գնահատված է որպես քաղաքական և ռազմական հենարանից զուրկ, աստանդական վիճակում գտնվող, անկայուն մի իշխանություն։ Եթե մինչև 1727 թ., երբ Նադիրը, իրեն վերանվանելով «Թահմասպկուլի», իր ղեկավարած շարժման նպատակն էր համարում Սեֆեդիների գահի վերականգնումը, այդ իշխանությունը դեռ որոշ կշիռ ուներ, ապա այնուհետև, երբ ձեռք բերած հաղթանակների շնորհիվ բարձրացավ Նադիրի հեղինակությունը, որպես օտար նվաճողների դեմ երկրում ծավալված պայքարի միակ ղեկավարի, Թահմասպի լիովին հեղինակազորված էր, ուստի և նրա արձակած հրովարտականն ու հրահանգները, մեծ մասամբ, գործնական հետևանքներ չէին ունենում։ Անհաջող ընդհարումները օսմանցիների հետ ավելի քան թուլացրին նրա դիրքերը, որից հետո դրություն տեղի փաստորեն Նադիրն էր։

Մենք արդեն տեսանք, որ 1727 թ. հունվարին սիփահասալար Մուհամադ-Ռիզա խան Աբգալլուին հղված հրովարտակը, որով կարգադրվում էր օգնություն ցուց տալ Դավթ-բեկին, ոչ մի հետևանք չունեցավ և անհավասար պայքարում հայ մարտիկները, փոքրաթիվ ուժերով կարողացան պարտության մատնել օսմանցիներին և դուրս բերլ Ղափանի սահմաններից։ Հաղթանակի լուրն ստանալուց հետո Դավթ-բեկին շնորհված հրովարտակով էլ թեև տեղի ադրբեջանական խաներին կարգադրված էր ենթարկվել Դավթ-բեկին, սակայն դրանք մեծ մասամբ հնազանդվել էին օսմանցիներին և օգնում էին նրանց՝ Դավթ-բեկի դեմ մղված կռիվներում, իսկ Դուզալի Քյազում-խանի մասնակի համագործակցությունը Դավթ-բեկի հետ և մասնակցությունը հետագա կռիվներին, ինչպես տեսանք, ձևական բնույթ էր կրում։ Երբ ձեռք բերած հաջողություններից գոտեպնդված Դավթ-բեկը, հետապնդելով օսմանցիներին, մուտք գործեց Ագուլիս, այստեղ առավել ևս հաստատվեց, թե որքան սնամեջ և ապարդյուն կարող էին լինել քաղաքականապես սնանկ գահի հավակնորդի արձակած հրահանգները։

Նկարագրելով օսմանցիների դեմ Ագուլիսում մղված կռիվները, Տեր-Ավետիսը, առանց անունները նշելու, խոսում է նաև շահի հրահանգով օգնության եկած խաների մասին. «Ապա յետ այսորիկ արքայն Պարսից Շահ Թահաս առաքեաց յօգնութիւն Դաւթի զերիս խանս, և վերստին դիմեաց օսմանցին և խորտակեցաւ ի սոցանէ։ Սակայն իշխանքն Ագուլէսի ծածկապէս դաշնադիր էին ընդ օսմանցոց, և սոքա ոչ գիտէին»³⁰։ Այնուհետև հաջորդ ձևատամարտի նկարագրության մեջ նշված է, որ օսմանցոց դեմ Դավթը թևերից մեկում նշանակում է օգնության եկած խաներին, մյուսում Տեր-Ավետիսին, իսկ ինքը գլխավոր ուժերով ամրանում է ճակատի կենտրոնական մասում։ Եվ ահա թշնամու առաջին իսկ հարձակումից խաները լքում են դիրքերն ու փախուստի դիմում, ծանր կացության մեջ դնելով Դավթ-բեկին։ Սակայն,

²⁸ Նույն տեղում, էջ 173—174։

²⁹ Նույն տեղում, էջ 174։

³⁰ Նույն տեղում, էջ 140։

ինչպես գրված է «Պատմության» նշված հատվածում, «զօրքն Հայոց պինդ կացին, հարին և վանեցին զօսմանցին, և իբրև փախստականս արարին, և ապա պնդեցան զկնի խանիցն (մինչդեռ փախստեալ երթալին նոքա ի Թավրէզ), հասին նոցա և դարձուցին զամենայն զօրս նոցա, և բերին ի յԱդուլէս. բայց երկու խանքն փախեան»³¹:

«Պատմության» հետագա շարադրանքից կարելի է վստահորեն եզրակացնել, որ խաների փախուստով էլ ավարտվում է շահի հրահանգով օգնության եկած իրանական ուժերի «մասնակցությունը» օսմանցիների դեմ մղված կռիվներին³²: Դրանով հանդերձ հայ մարտիկները միայնակ ոչ միայն կարողացան պարտության մատնել հակառակորդին, այլև հետապնդել և պատուհասել փախչող խաներին:

Ձեռք բերած ռազմական հաջողությունների զարգացմանը, սակայն, խանգարում էր ոչ թե խաների դասալքումը, այլ լրջորեն խոչընդոտում էր դասակարգային հակադիր ձգտումներից մղված և օսմանցիների խորամանկ խոստումներից խաբված, Ագուլիսի մեծահարուստ առևտրական դասի ներկայացուցիչների նենգավոր դիրքորոշումը, որոնք եթե նախապես «ծածկապէս դաշնադիր էին ընդ օսմանցոց», ապա, ինչպես կարդում ենք «Պատմության» համապատասխան հատվածում, «չետ այսորիկ իբրև երկու աւուրք ի վերայ անցին, արքն Ագուլէսի և մելիք Մուսին զգաւաճանութիւնս իւրեանց յայտ արարեալ, գրոհ տուին ի մէջ քաղաքին և արձակել սկսան ի վերայ զօրացն Դաւթի Թօփս: Իսկ նոցա խնայեալ ի նոսա (վասն զի ամենայն քաղաքացիքն էին հայ, և ոչ ոք այլազգի գոյր անդ)»³³:

Համապատում բնագրում վերաշարադրելով այս դեպքերը, Դ. Ստեփանոսյանը ավելի է շեշտում եղբայրասպան կռիվից Դավիթ-բեկի խուսափելու հանգամանքը, ավելի մանրամասն բացատրելով, որ «սոքա խնայեցին ի նոսա, վասն գոլոյն համազգային, և զի ոչ կամէին մտանել յարիւն այնքան քրիստոնէից. վասն զի ի քաղաքի անդ էին աւելի քան զտասն հազար տուն հայոց»³⁴:

Այս խռովահույզ իրադարձությունների գլխավոր կազմակերպիչը Ագուլիսի քաղաքի մելիք Մուսին էր, որի նենգ մտադրությունները նախապես կռահելով, Դավիթ-բեկը սկզբում կարգադրել էր գլխատել նրան, սակայն անսալով իր զինակից մելիք Փարսադանի միջնորդությանը, հրաժարվել էր այդ մտքից: Իսկ երբ նրան ենթակա Ագուլիսի զինված ջոկատները բացահայտ թշնամական դիրք գրավելով սկսեցին գնդակոծել Թովմա Առաքյալի վանքը, ուր իր զինվորներով ամրացել էր Դավիթ-բեկը, և վերջինս հաշտության նպատակով մելիք Փարսադանին ուղարկեց բանակցելու, մելիք Մուսինի մարդիկ սպանեցին նրան³⁵:

Այս պարագաներում էր, որ Դավիթը որոշեց, առանց արյունահեղության, իր զորքերը դուրս բերել թշնամու հետ համագործակցող հայրենակիցների ծուղակից և գնալ ամրապնդելու Ղափանի հայության միասնությունը, որի մեջ նույնպես, օսմանյան իշխանությունների ռազմական ճնշման հետ զուգորդված դավադրությունների հետևանքով, մերթնդմերթ ճեղքվածքներ էին առաջանում:

Շուտով անհրաժեշտ եղավ վճռական քայլերի դիմել՝ կանխելու համար Ջավնդուրի զինվորության պարագլուխների ենթարկումը օսմանյան իշխանություններին: Տեր-Ավետիսի գլխավորությամբ Հալիձորից ուղարկված զինվորները, ձերբակալելով խռովարարներին, օսմանցի կառավարչի հետ միասին տարան Հալիձոր, որտեղ նրանք հնազանդության երդում տվին Դավիթ-բեկին:

31 Նույն տեղում, էջ 140—141:

32 Նույն տեղում, էջ 141—142:

33 Նույն տեղում, էջ 141:

34 Նույն տեղում, էջ 176:

35 Նույն տեղում:

Միաժամանակ, անընդմեջ շարունակվում էին անհավասար մարտերը Ղափան ներխուժած օսմանյան ղորաբանակների և նրանց միացած Ֆաթհ-Ալի սուլթանի և այլ տեղական ֆեոդալների ասպատակիչ զորքերի դեմ:

Դավիթ-բեկի մահից և Հալիձորի անկումից հետո, Մխիթար-բեկի զխավորությամբ շարունակվող ազատագրական պայքարը, առանձնապես, ասլաքոված հենակետներից զուրկ պարսիզանական կոիվներով էր բնորոշվում: Հերոսական դրվագներով հարուստ այդ գոյամարան անշուշտ բախաորոշ դեր խաղաց Սյունյաց լեռնաշխարհի հայության պատմական ճակատագրում. ամրապնդելով հետագա սերունդների հավաքը սեփական ուժերի նկատմամբ: Սակայն, ինչպես վերը տեսանք, 1722—1728 թթ. ծավալված հաղթական ուղիական գործողություններին գուգահեռ երևան եկան նաև Դավիթ-բեկի՝ իրավիճակի արագ փոփոխությունների ողորտում ճիշտ կողմնորոշվող, իրատես պետական-քաղաքական գործչին բնորոշ հատկանիշները, որով և կարճ ժամանակամիջոցում, օգտվելով իրանում կենտրոնական իշխանության բացակայության պայմաններից, պատմական Սյունիքի լեռնային տարածքում ստեղծվեց ղուա հայնայան մի իշխանություն, որից սարսափում էին ոչ միայն տեղական խաներն ու այլազգի իշխանավորները, այլ նաև օսմանյան բանակի ղորահրամանաարները և որին սախաված էր ճանաչել և հաշվի առնել օտար ներխուժման գեմ ումագրությանը նախանձախնդիր շահ Թահմասպ II-ը³⁶:

БОРЬБА ДАВИД-БЕКА ПРОТИВ ОСМАНСКОГО ВТОРЖЕНИЯ И ЕГО ВЗАИМООТНОШЕНИЯ С СИЛАМИ ИРАНСКОГО АНТИОСМАНСКОГО СОПРОТИВЛЕНИЯ

Доктор ист. наук А. Д. ПАПАЗЯН

Резюме

Осуществленное С. Арамяном новое полное, оснащенное научным исследованием критическое издание исторического труда представляет собой основной источник по истории освободительных боев 1722—28 гг. в Сюнике, возглавляемых Давид-беком, записанного Г. Степаносяном. Оно дает возможность пересмотреть, уточнить и заново истолковать некоторые обстоятельства политической деятельности и военных действий, осуществлявшихся руководителями движения в условиях быстрых перемен политических ситуаций.

На основе параллельных данных некоторых армянских и, в особенности, персидских источников и архивных документов в статье раскрываются отдельные вопросы, имеющие отношение к событиям периода османской оккупации.

Прилагается персидский оригинал с переводом на армянский язык одного из использованных источников—новоброжденного указа 1724 г. шаха Тахмаспа II, направленного одному из противников Давид-бека, правителю Баргушата, Фатх-Али-султану.

³⁶ Այս մասին ամելի մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 161—175: